ԼՂՀ-Ի ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ, ԱՐՏԱԳԱՂԹԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Հ. Բ., ԳԵՂԱՄՅԱՆ Գ. Մ.

2010 թ. մայիսի 20-ին, Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած Ազգային Ժողովի 5-րդ գումարման ընտրություններից երեք օր առաջ, Եվրոպական խորհրդարանի կողմից լիազումար նիստում ընդունվել է բուլղարացի պատգամավոր Եվգենի Կիրիլովի հեղինակած 2216-րդ բանաձևը, որտեղ խոսվում է Հարավային Կովկասում Եվրոմիության որդեգրած ռազմավարության հիմնական ուղղությունների մասին: Ե. Կիրիլովի պատրաստած այդ նախագիծը ավելի ադրբեջանամետ է դարձրել Եվրոխորհրդարանի Արտաքին հարցերի հանձնաժողովը: Մեզ՝ հայ ժողովրդի նորագույն պատմության մասնագետներիս, խիստ անհանգստացնում են այդ որոշման այն հոդվածները, որոնք անմիջապես առնչվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնախնդրի հետ: Պարոն Կիրիլովը, որը երբեք չի եղել Արցախ-Ղարաբաղում, մի որոշում է հեղինակել, ըստ որի, Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին պիտի վերադարձնի արյամբ ազատագրված յոթ շրջանները, շրջաններ, որոնք ոչ վաղ անցյալում եղել են Արցախի տարածքներ: Այդ որոշման երևան գալու գործում իրենց մեղքն ունեն հայ դիվանագետները: Կամա թե ակամա, այդ որոշումը հստակ միտում ունի խեղաթյուրել ղարաբաղյան հիմնախնդրի առաջացման պատճառները և հակամարտության զարգացման ընթացքը: Բացի դրանից, այդ թուրքամետ որոշումը, խոսելով միայն ազերի փախստականների մասին, լիովին անտեսում է Ադրբեջանից բռնագաղթի ենթարկված 400 հազար հայերի շահերը, որոնք միլիարդների հարստություն թողնելով Ադրբեջանում՝ մի կերպ, մազապուրծ սփռվել են աշխարհով մեկ: Պարոն Կիրիլովը, այդ անտեսելով, փաստորեն կատարել է թուրք-ազերական պատվեր:

Մինչդեռ ազատագրված այդ տարածքները արցախահայության համար ունեն ռազմավարական մեծագույն նշանակություն Արցախի պաշտպանության, արցախցիների կյանքի ապահովման համար: Երևի պարոն Կիրիլովը կարծում է, թե արցախցիները ազատագրված տարածքները սկուտեղի վրա պիտի մատուցեն ազերի բարբարոսներին՝ անցյալում Անդրկովկաս ներխուժած միջինասիական տափաստաններից եկած քոչվորներին, մի ժողովուրդ, որը գերադասում է ուրիշի արարածը՝ ունեցվածքը յուրացնել և սեփական հայտարարել: Օրինակներն անհաշիվ են: Սակայն դա չէ մեր խնդիրը: Ակնհայտ է, որ մինչև արցախյան շարժումը, Լեռնային Ղարաբաղը գտնվում էր անելանելի վիճակում, այսինքն՝ կտրված էր մայր Հայաստանից: Արցախահայության ազգային-ազատագրական պայքարի հենց սկզբից կենսական պահանջ էր դուրս գալ այդ վիճակից և մայր ժողովրդի հետ ունենալ ցամաքային ճանապարհ, ասել է, թե՝ ունենալ ուղղակի կապ: Սակայն 1920-ական

թթ. սկզբներին Ադրբեջանը ստեղծել էր Կարմիր Քուրդստան, որը խոչընդոտում էր Լեռնային Ղարաբաղի ցամաքային կապին՝ Հայաստանի հետ: Հետագայում, 20-ական թթ. վերջին, այդ Քուրդստան կոչեցյալ գավառն անհետացավ, քարտեզից ջնջվեց, և փոխարենը գունազարդվեցին ադրբեջանական մի քանի շրջաններ: Ղարաբաղյան ազգային-ազատագրական պատերազմի տարիներին այդ շրջաններում հայտնվեցին հարյուրավոր կրակակետեր, որտեղից անընդհատ ռմբակոծվում էին Լեռնային Ղարաբաղի սահմանամերձ տարածքները: Ահա թե ինչու ազատագրական պայքարի ժամանակաշրջանում յՔելբաջարի, Լաչինի, Ջեբրայիլի, Ֆիզուլիի, Ղուբաթլուի, Զանգելանի և Աղդամի շրջանների ազատագրումը դարձավ հրատապ և անհետաձգելի խնդիր:

Արցախ-Ղարաբաղի հիմնախնդրի պատմական ակունքները գընում են հեռու, մինչև XVIII դար և դրանից էլ այն կողմ: Այդ տարածքի վրա Պարսկաստանի ստեղծած և նրան ենթարկյալ խանա-կան իշխանություններն իրենց գոյությունը շարունակել են մինչև XIX դ. քսանական թվականները, մինչև Ռուսաստանի և Պարսկաստանի միջև Արաքսի՝ սահման դառնալը: Այնուհետև, Ռուսաստանի կազմում գոյատևած Արցախ-Ղարաբաղը թե՛ այն ժամանակ և թե՛ հետագայում՝ խորհրդային տարիներին, պահպանել է իր վարչական ու քաղաքական ինքնությունը: Ո՞վ կարող է ապացուցել, որ մինչև 1918 թ. մայիսի վերջը աշխարհում երբևիցե եղել է ադրբեջանական պետություն: Ակնհայտ է, որ այն ծնվել է ավագ եղբոր՝ Թուրքիայի անմիջական ջանքերով, 1918 թ.: Եվ ակնհայտ կեղծիքի դիմելով, առանց որևէ իրական փաստ ունենալու՝ թուրք-ազերի պատմաբանները աշխարհով մեկ հայտարարում են, իբր, դարեր շարունակ գոյություն ունեցած «Ադրբեջան» կոչված պետության մասին, և որ իրենց պապերն են արցախցիներին տարածք հատկացրել բնակվելու համար: Մինչդեռ Արցախ-Ուտիքը հազարամյակների պատմություն ունի: Այն ընդգրկել է Քռի ամբողջ աջափնյակը և հասել մինչև Արաքս: Դա այն ժամանակներում էր, երբ ներկայիս թուրք-ազերիների նախնիները միջինասիական տափաստաններում ոչխարներ էին արածեցնում: Իսկ հիմա բուլղար հայատյաց պարոն Կիրիլովը, որի հայրենիքը դարեր շարունակ հոշոտվում էր թուրք բարբարոսների կողմից, իր հեղինակած բանաձևում սևով սպիտակի վրա գրում է ու պահանջում. «Հայկական ուժերը դուրս բերել ադրբեջանական օկուպացված տարածքներից՝ թույլ տալով ներքին տեղահանվածներին վերադառնալ իրենց օջախները»: Հենց այդպես, ոչ ավել և ոչ պակաս:

Հիմա ավելի կոնկրետ անդրադառնանք ազատագրված տարածքներին առնչվող հարցին: Ակնհայտ է, որ ոչ հեռու անցյալում Արցախն ընդգրկում էր Լեռնային Ղարաբաղը, Շահումյանը, Խանլարը, Կիրովոբադը, Շամխորը, Դաշքեսանը, Գետաբեկը և էլի տարածքներ: XIX դ. ռուս պատմաբանի բերած տվյալներով այդ ժամանակներում Արցախ-Ղարաբաղն ունեցել է 13 հազար քառակուսի վերստ տա-րածք, իսկ մեկ ուրիշ հեղինակ այդ թիվը հասցնում է 15 հազարի: Մեծ հայրենականի

նախօրյակին միայն հյուսիսային Արցախում բնակվում էր մոտ 200 հազար հայ: Ամբողջ Արցախը ռազմաճակատ է ուղարկել 90 հազար իր զավակներին. դա կազմել է այդ տարածքների հայերի 40 տոկոսից ավելին: Նրանցից տուն չէին վերադարձել 45 հազարը, կամ 50 տոկոսը: Արցախի ազգային-ազատագրական պատերազմի սկզբներին՝ 1989-1990 թթ., Խանլարի շրջանի Գետաշենի ենթաշրջանը և Շահումյանի շրջանը, վերստին միավորվելով Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հետ, կազմեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, մոտ 11 հազար քառակուսի կիլոմետր տարածքով:

Սակայն 1991 թ. ապրիլի վերջից գործողության մեջ դրվեց «Օղակ» ռազմական օպերացիան՝ խորհրդային 4-րդ բանակի 23-րդ դիվիզիայի զորամասերի ամենաակտիվ մասնակցությամբ, որոնց ծառայողների զգալի մասը ազգությամբ ազերի էին, և բռնագաղթի ենթարկվեցին Գետաշենի և Բերդաձորի ենթաշրջաններից 10, ինչպես և Հադրութի շրջանից՝ 14 բնակավայրեր: Հադրութի շրջանից բռնագաղթի են ենթարկվել Բանաձոր, Առաքյուլ, Բինյաթլու, Քարագլուխ, Մյուլքուդարա, Ջիլան, Ծամձոր, Շաղախ, Աղջաքենդ, Դոլանլար, Արփագյադուկ, Պետրոսաշեն, Յոր, Սպիտակաշեն, Բերդաձորի ենթաշրջանից՝ Կիրով, Մեծղարադարասի, Եղծահող, Կանաչամալա և Ծաղկաձոր բնակավայրերը՝ 2047 բնակիչներով: Բոլոր 24 բնակավայրերից բռնագաղթվել են 1772 ընտանիք՝ 4452 բնակիչներով: Միայն Հադրութի շրջանից և Բերդաձորի ենթաշրջանից բռնագաղթված բնակիչներից, ըստ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվի 254-րդ ֆոնդի 5-րդ ցուցակի 7-րդ գործում պահվող նյութերի, ազերի օմոնականները և թալանի համար շրջան ներխուժած բարբարոսները հափշտակել, խլել, թալանել են ու տարել 2541 խոշոր եղջերավոր անասուն, 1256 խոզ, 4774 ոչխար և այծ, 210 ավանակ, 141 ձի, 18 ջորի, 447 մեղվաընտանիք, էլ չենք խոսում տներից տարված մյուս ապրանքների, ոսկեղենի, դրամի մասին: Ընդհանրապես՝ 1988-1991 թթ. Լեռնային Ղարաբաղի բնակչությունը թուրք-ազերիների կողմից կրել է 30 մլն 506 հազար ռուբլու վնաս: Եվ այդ բարբարոսությունները կատարողներից ոչ մեկը պատասխանատվության չի ենթարկվել:

«Օղակ» ֆաշիստական օպերացիան, որն իրագործվել է խորհրդային զինվորների և ազերի օմոն ավազակախմբերի կողմից, Արցախը պարզապես վերածել էր գեհենի: Արցախահայության զոհերի թիվն օր օրի աճում էր: Հանձնված Շահումյանին հաջորդեց Մարտակերտի զգալի մասը: 6500 զոհը բավական մեծ թիվ է մի փոքրաթիվ ժողովրդի համար: Պատմական Արցախից գրավված տարածքները թուրք-ազերիները դարձրել էին ռազմակետեր, որտեղից ամեն օր հարյուրավոր հրթիռներ և արկեր էին արձակվում Արցախի բնակավայրերի, մանավանդ՝ մայրաքաղաք Ստեփանակերտի, Մարտունու, Հադրութի և այլ բնակավայրերի ուղղությամբ: Պարզապես՝ երկրամասը լրիվ ավերվում, հրդեհվում և կործանվում էր: Ամեն օր տասնյակ զոհեր էին հողին հանձնվում: Եվ այդ գեհենից հետո Ադրբեջանի իշխանություններն այսօր աշխարհին հայտարարում են, թե Հայաստանը գրավել է

հանրապետության տարածքի 20%-ը (8.78 հազար քառակուսի կիլոմետր), որի հետևանքով իբր գոյացել է մեկ միլիոն փախստական: Մինչդեռ իրականում ԼՂՀ պաշտպանության բանակի (ՊԲ) հսկողության տակ գտնվում է Ադրբեջանի Հանրապետության տարածքի ոչ թե 20, այլ 8%-ը: Հայ ազատամարտիկների հերոսական գործողությունների հետևանքով ազատագրվել են Լաչինի, Քելբաջարի, Ղուբաթլուի, Ջեբրայիլի և Զանգելանի շրջանները լրիվ, իսկ Ֆիզուլիի և Աղդամի շրջաններն ազատագրվել են մասնակիորեն, 30%-ով: Առաջին հինգ շրջանների տարածքները կազմում են 6330 ք. կմ, իսկ Աղդամի և Ֆիզուլիի ընդհանուր տարածությունները՝ 2480 ք. կմ, սակայն դրանցից ԼՂՀ ՊԲ-ի հսկողության տակ է գտնվում Աղդամի տարածքի 35 և Ֆիզուլիի տարածքի 25%-ը, այսինքն՝ 383 և 347 ք. կմ: Այսպիսով՝ ԼՂՀ ՊԲ-ի հսկողության տակ գտնվող տարածքը կազմում է ոչ թե 8780 ք. կմ, այլ 7059, որը կազմում է Ադրբեջանի տարածքի 8%-ը, կամ 2,5 անգամ պակաս այն 20%-ից, ինչի մասին անընդհատ աղաղակում են Ադրբեջանի ղեկավարները՝ նպատակ ունենալով շփոթության մեջ գցել միջազգային հանրությանն ու համաշխարհային հասարակական կարծիքը: Իսկ ինչո՞ւ Ադրբեջանը չի խոսում այն մասին, որ իր տիրապետության տակ են գտնվում Գետաշենի ենթաշրջանը, Շահումյանի շրջանը, Մարտակերտի շրջանից 8 բնակավայրեր՝ իրենց տարածքներով և Մարտունու շրջանի դաշտավայրային շրջանը, որոնք կազմում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի 15%-ը:

Հայկական զորամասերը երբեք նպատակ չեն ունեցել Ադրբեջանից տարածքներ գրավել: Նրանք միայն ազատագրել են այն տարածքները, որոնք ռազմավարական նշանակություն ունեին և խիստ վտանգ էին ներկայացնում ԼՂՀ-ի գոյությանը: Փաստորեն՝ Արցախի ազատագրական ուժերի նպատակն է եղել ապահովել ԼՂՀ բնակչության անվտանգությունը: Հայ ազատագրական ուժերը, ըստ էության, կատարել են պատմական առաքելություն՝ ԼՂՀ-ն փրկելով հեռահար հրետակոծությունից և այդ նպատակով սահմանները հեռացրել հարավ-արևելք: Ազատագրված տարածքները վերադարձնելը հայկական կողմից՝ կլինի մեծագույն սխալ և ողբերգական քայլ ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի համար՝ հարվածի տակ դնելով վերջինիս ամբողջ հյուսիսարևելյան-հարավարևելյան տարածքները:

Հիմա իրենց բնակավայրերից հեռացածների և բռնագաղթվածների հարցի շուրջ: Ադրբեջանը ավելի քան 16 տարի է՝ անընդհատ աղաղակում է, թե ունի 1 միլիոն փախստական: Սակայն դա բնավ այդպես չէ, այլ պարզապես ամբոխավարություն է և համաշխարհային հանրությանը մոլորության մեջ գցելու միտում: Ըստ Ադրբեջանի վիճակագրական տվյալների, վերոնշյալ 7 շրջանների բնակչությունը նախապատերազմյան շրջանում կազմել է 490.3 հազար մարդ: Մեկ միլիոն փախստականը լրիվ հակասում է նույնիսկ պաշտոնական վիճակագրությանը: Ադրբեջանի լրագրող Իրադա Հյուսեյնովան, որը Ադրբեջանի իշխանությունների ճնշումներից ազատվելու համար հեռացել է Ադրբեջանից և հիմա բնակվում է

Գերմանիայում, իր ուսումնասիրություններում հանգել է նրան, որ Ադրբեջանի «վիճակագրության վարչության վերջին տվյալներով, հարկադիր վերաբնակիչների թիվը կազմում է 568989 մարդ, փախստականները՝ 788765 մարդ՝ բայց ոչ միլիոն»: Ըստ լրագրողի բերած տվյալների, հայկական ուժերի կողմից ազատագրված տարածքներում ապրում էր 480 հազար մարդ, որոնցից մոտ 160 հազարը եղել են հայեր, քրդեր և ռուսներ, և որ այդ տարածքներից հեռացած 320 հազար ազերիների զգալի մասը ապաստան է գտել ոչ Ադրբեջանի Հանրապետության տարածքում: Պարզվում է, որ բռնագաղթվածների թիվը չէր կարող 300 հազարից ավելի լինել: Եվ եթե դրան գումարվեն Հայաստանից Ադրբեջան տեղափոխված 160 հազար ազերիները, ապա փախստականների ընդհանուր թիվը կկազմի 450 հազար, այսինքն՝ Բաքվի իշխանությունների ներկայացրած թվից մոտ երկու անգամ քիչ: Հեղինակը հանգել է այն եզրակացության, որ փախստականներին Ադրբեջանի իշխանությունները հատուկ պահում են յուրօրինակ համակենտրոնացման ճամբարներում, որպեսզի ճնշում գործադրեն Արցախի վրա: Ասենք նաև, որ Ադրբեջանից հեռացած 400 հազար հայերից 220 հազարը միայն Բաքվից էին:

Ադրբեջանը հպարտանում է իր գազով ու նավթով և անընդհատ աղաղակում է դրանց բերած շահույթի մասին: Այդ դեպքում ո՞ւր են գնում այդ օգուտները, ինչո՞ւ բնակարաններ չեն կառուցում փախստականների համար ու նրանց դուրս բերում այդ հատուկ ճամբարներից: Իշխող ուժերը, անկասկած, յուրացնելով այդ գումարների առյուծի բաժինը, շարունակում են փախստականներին պահել ստրկացուցիչ պայմաններում և սին հույսերով կերակրում նրանց, թե իբր, շուտով կվերադառնան իրենց նախկին բնակավայրերը:

Անդրադառնանք Արցախից բռնագաղթված հայերին: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 1991 թ. սկզբին ԼՂՀ-ում եղել է 165 հազար հայ, ներառյալ Գետաշենի և Շահումյանի բնակչությունը: Դրանցից շուրջ 60 հազարը ազերիների բռնաճնշումների հետևանքով դարձել են փախստական: Ավելի ստույգ տվյալներով՝ Արցախից բոլոր փախստականները կազմել են 114 հազար մարդ: Տարածքների մի մասն ազատագրվելուց հետո դրանցից 35 հազարը վերադարձել են: Այդ 114 հազարից 83 հազարը Խանլարի, Դաշքեսանի, Շամխորի, Գետաբեկի շրջաններից են և Կիրովաբադից, 31 հազարը՝ ԼՂՀ Շահումյանի և Մարտակերտի շրջաններից: Ընդհանուր առմամբ, 1991 թ. սկզբի տվյալներով, Լեռնային Ղարաբաղից փախստականների և տեղահանվածների թիվը եղել է 61 հազար, այսինքն՝ երկրամասի հայ բնակչության 33%-ը: Այս տվյալները համոզում են, որ փախստականների և տեղահանվածների առումով Լեռնային Ղարաբաղում իրավիճակն անհամեմատ ծանր էր:

Հիրավի, 1992 թ. Արցախի պատմության մեջ կմնա որպես ողբերգական և ամենածանր տարիներից մեկը: Նաև շեշտենք, որ հաջորդ երկու տարիներին ազգային-ազատագրական պայքարի հետևանքով ձեռք բերված հաջողությունների կողքին երևան եկան նաև մի շարք տխուր փաստեր: Եվ այսօր Ադրբեջանը

աղաղակում է իր փախստականներին իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու և բնակվելու համար երաշխիքներ տալու մասին: Թուրքական քարոզչությունը բացահայտորեն վերածվել է մուսուլմանական ֆանատիզմի և միայն մի ձգտում ունի. ստեղծել միատարր թուրքական գոտի՝ տասնյակ հազարավոր կիլոմետր տարածության վրա: Թուրքերի այն պահանջը, որ հայերը պետք է վերադարձնեն ազատագրված տարածքները, հիմնականում նշված նպատակն է հետապնդում: Պանթուրքիզմը թուրքերի կենսական խնդիրն է: Իսկ թե Գետաշենը, Շահումյանը, Մարտակերտի և Մարտունու շրջաններից բռնազավթած տարածքների հարցը ինչպես պետք է լուծվի, այդ մասին հիշել չեն ցանկանում: Դրան գումարած այն, որ Ադրբեջանից հեռացած 400 հազար հայերի վերադարձի, իրենց օջախներում բնակվելու մասին ո՞վ պիտի հոգա: Ազերիները, բացահայտ պատերազմ սկսելով հայության դեմ, առաջնորդվել են թուրքին հարիր սկզբունքով՝ հողը ազատագրվում և պաշտպանվում է արյամբ: Իսկ չէ՞ որ այդ սկզբունքը կարող են օգտագործել նաև այլազգիները, ասենք՝ հայերը: Եվ չէ՞ որ հայ ազատամարտիկների ազատագրած տարածքները հեղվել են հայի արյամբ էլ ի՞նչ հիմքով դրանք պիտի վերադարձվեն: Երբ ավագ Ալիևը հազարավոր ազերիների բերում և բնակեցնում էր Գետաշենում ու Շահումյանում, ի՞նչ սկզբունքով էր առաջնորդվում: Կամ ի՞նչ եղավ հազարավոր բռնագաղթված հայերի ունեցվածքը Կիրովաբադից մինչև Բաքու ընկած տարածքում:

Թուրք-ազերական համատեղ աղաղակները և մի շարք հարցերի միջազգային հնչեղություն տալու ճիգերը նախ և առաջ պայմանավորված են թուրքական գործոնով: Թուրքիան ոչ մի բարոյական իրավունք չունի քիթը խոթելու Արցախի հիմնախնդրի մեջ և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հիմքում դնելու Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Այսօր միջազգային ամենամեծ ահաբեկիչը ինքն է՝ Թուրքիան, որը 1920-ական թթ. սկզբին Արևելյան Հայաստանից գավթել է Կարսը, Ալաշկերտը, Արդահանը, իսկ 30 տարի առաջ՝ Կիպրոսի հյուսիսային տարածքը: Իսկ ի՞նչ վիճակում է քրդական հարցը: Եվ եթե Թուրքիան շատ է մտահոգված իր կրտսեր եղբոր հոգսերով և Լեռնային Ղարաբաղը կրկին նրան վերադարձնելու ցավով, ապա թող նախ իր հետ կապված խնդիրները լուծի և ամենից առաջ վերադարձնի հայերից գավթած տարածքները: Զարմանալին այն է, որ Հայաստանի իշխանությունները այդ հարցերը՝ Գետաշենի, Շահումյանի, Մարտակերտի և Մարտունու, պետականորեն չեն բարձրացնում և դնում տարածքները վերադարձնելու պահանջը: Մենք չենք հասկանում. գուցե այստեղ կա որևէ գաղտնիք, որ Հայաստանի իշխանությունները չեն բացահայտում: Մեր կարծիքով, այստեղ և ոչ մի գաղտնիք էլ չկա: Թուրքը միշտ էլ մնում է թուրք: Եվ երբ այսօր այդ նույն թուրքը հայտարարում է, թե, իբր, հայկական կողմը համաձայնվել է 7 շրջաններից առաջին հերթին ազատել Քելբաջարն ու Ֆիզուլին, ենթադրում է, որ դրան կհետևեն մյուս 5 շրջանները: Դա բացահայտ քաղաքական արկածախնդրություն է: Այդ խաբկանքը թուրքի գլխում վաղուց է կարծրացել, այն

պետք է պոկել ու դեն շպրտել: Աշխարհում ո՞ր հայը կհամաձայնվի ընդառաջել այդ անբարո ցանկությանը: Պատերազմ սկսելով Արցախի դեմ և պատճառ դառնալով հազարավոր զոհերի՝ Ադրբեջանը հիմա էլ բարբաջում է ազատագրված տարածքները հետ խլելու մասին: Իսկ հետո՞: Հետո այն, որ Սևանում լողանալու մեծ ցանկություն կհայտնեն, չէ՞ որ դա է եղել նաև թուրք-ազերիների նախկին իշխանավորների ցնորքներից մեկը: Եվ մի՞թե թուրքը չի հասկանում, որ այլևս բացառվում է հային իր ենթակայության տակ դնելը:

Այսօր Արցախի Հանրապետությունը գտնվում է իր վերածննդի, ազգային ինքնության ամրապնդման, ժողովրդավարության զարգացման ճանապարհին, որը հստակ պատասխան է թուրք-ազերական նկրտումներին: Արցախի Հանրապետությունը իր ժողովրդավարությամբ զգալիորեն բարձր է Ադրբեջանից և Թուրքիայից, որոնք, պարզապես, գաղութային աստառ ունեն և փոքր ժողովուրդներին ստրկացնող ու ոչնչացնող սատրապներ են: Հիրավի, Արցախը թուրքի սպառնալիքներին պատասխանում է իր ժողովրդավարությամբ: 2010 թ. մայիսին տեղի ունեցած՝ Արցախի Ազգային ժողովի 5-րդ գումարման ընտրությունները դրա լավագույն ապացույցն են: Աշխարհի 16 երկրներից եկած 124 դիտորդներ բարձր են գնահատել Արցախի խորհրդարանական ընտրությունները: Նրանց համոզմամբ՝ աշխարհի շատ երկրներ «արժե, որ Արցախից սովորեն ժողովրդավար և ազատ ընտրություններ անցկացնելու մշակույթը»: Խորհրդարանական ընտրություններն Արցախում իսկական տոնի էին վերածվել:

Արցախի Հանրապետությունը մի գերխնդիր ունի՝ առաջիկայում հայրենի օջախներ վերադարձնել տարագնաց զավակներին և բնակչության թիվը հասցնել առնվազն 300 հազարի, այսինքն, ներկայիս ուղիղ կրկնապատիկին: Իսկ դրա համար, նախ և առաջ, երկարատև և ամուր խաղաղություն է պետք, ինչպես և նպատակասլաց կամք ու գործունեություն՝ հիշելով, որ հայրենիքը ժողովրդով է հայրենիք: Հակառակ դեպքում Արցախն իր խնդիրները լուծելու հնարավորություն չի ունենա: Ահա թե ինչու Հայաստանի Հանրապետությունը և Սփյուռքը հակված են Արցախի հիմնախնդիրը վճռել խաղաղ բանակցությունների ճանապարհով՝ հակազդելով հակառակորդի ռազմատենչ կոչերին:

К ВОПРОСУ ОБ ОСВОБОЖДЕННЫХ ТЕРРИТОРИЯХ НКР, ИХ ПЕРЕЗАСЕЛЕНИИ И МИГРАЦИИ

АБРАМЯН Г. Б., ГЕГАМЯН Г. М.

Резюме

На сегодняшний день азербайджанские власти выступают с заявлениями о том, что Армения оккупировала 20% территории их республики (878 тыс. км^2), в результате чего 1 млн азербайджанцев оказались беженцами.

Между тем армия НКР контролирует не 20%, а всего лишь 8% территории Азербайджанской республики. Благодаря героическим действиям армянских воинов-азатамартиков были освобождены Лачин, Кельбаджар, Кубатлу, Джебраиль и Зангелан, а территории Физули и Агдама были освобождены частично.

Территория первых пяти районов составляет 6330 км^2, а Агдама и Физули – 2480 км^2, однако оборонной армией НКР контролируется 35% территории Агдама и 25% территории Физули, т. е. 383 и 347 км^2. Таким образом, территория, контролируемая ОА НКР, охватывает не 8780 км^2, а 7059 км^2, что составляет 8% территории Азербайджана. При этом азербайджанское руководство умалчивает о том, что Геташенский подрайон, Шаумянский район, 8 населенных пунктов Мартакертского района и низменные районы Мартуни, составляющие 15% территории НКР, принадлежат Азербайджану.